

Թեմատիկ թեստային աշխատանք

Հայոց լեզու

VII դասարան

Ա/Ա _____

1. Առարկայի գործողություն կամ եղելություն ցույց տվող բառերը կոչվում են _____ :

2. Բառաշարքից դուրս գրի՛ր 5 բայ.

Արևագալ, թնդալ, ծխալ, գդալ, սխալ, տարավ, հանդես, քանդես, լողաս, շղարշեն:

3. Բառաշարքից դուրս գրի՛ր Ա խոնարհման 5 բայ:

Անսխալ, մխալ, կսկծալ, հեկեկալ, գեղածալ, ձնհալ, շրխկալ, շողալ, ծավալ, քենակալ:

4. Բառաշարքից դուրս գրի՛ր Ե խոնարհման 5 բայ:

Հմայել, եռալ, ծլկել, արժանավայել, շահել, կոշկաթել, առավել, ճոճել, անարգել, նվագել:

5. Բառաշարքից դուրս գրի՛ր 5 պարզ բայ:

Լրանալ, շնչել, փախչել, իջնել, զեղչել, կառչել, ավարտել, հնչել, հասնել, կտրտել:

6. Բայն ունի երեք սեռ.

1. _____ 2. _____ 3. _____

7. 1. _____ սեռի բայերը ցույց են տալիս ենթակայի այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է կրող առարկա:

2. _____ սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը ենթական կրում է իր վրա մեկ ուրիշ առարկայից:

3. _____ սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որով ենթական ո՛չ ներգործում է մեկ ուրիշի վրա, ո՛չ էլ ուրիշից կրում է իր վրա:

8. Հետևյալներից ո՞րն է բազմապատկական բայ:

1) կնճռոտել 2) ցեխտտել 3) պոկոտել

9. Նշվածներից որո՞նք հարակատար դերբայ չեն:

1) բացված 2) վարկած 3) հագեցած 4) արկած

10. Բերված նախադասության մեջ գտի՛ր ստորոգյալը և փոխի՛ր անկատար դերբայով կազմված ստորոգյալի: Ստորոգյալը գրի՛ր անցյալ ժամանակով: Պահպանի՛ր դեմքը և թիվը:

Ամրոցն ամայացավ, ինչպես մեռած ուրուրների բույնը:

Ստորոգյալը՝ _____, անկատարով՝ _____

բ) Գտի՛ր նախադասության մեջ գործածված մյուս բայը և նշի՛ր դերբայի տեսակը:

Մյուս բայը՝ _____, դերբայի տեսակը՝ _____

11. Բառաշարքից առանձնացրու՛ բառերը, տեղադրի՛ր համապատասխան պոնակներում:

